

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետի <<ա>> ենթակետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011թվականի ապրիլի 5 -ի N 280-Ն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածի 4-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հաստատել՝

1/ 2013-2014 ուսումնական տարվա դպրոցականների առարկայական օլիմպիադաների տարածքային և մարզային օլիմպիական կազմկոմիտեի անվանական կազմը՝ համաձայն N1 հավելվածի,

2/ 2013-2014 ուսումնական տարվա դպրոցականների առարկայական օլիմպիադաների տարածքային մարզային փուլի ժամանակացույցը՝ համաձայն N 2 հավելվածի,

3/ 2013-2014 ուսումնական տարվա դպրոցականների առարկայական օլիմպիադաների տարածքային և մարզային փուլերի առարկայական հանձնաժողովների անդամների անվանական կազմերը՝ համաձայն N N3, 4 հավելվածների:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ Կ. Մարգարյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ